**Արձանագրություն N 2**

***Արագածոտնի մարզի «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հագեցման համար, գնանշման հարցմամբ, անհրաժեշտ բժշկական սարքավորումների (պաթանատոմիական) ձեռք բերման նպատակով կազմակերպված, «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2023/51» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան «20» «Հոկտեմբերի» 2023թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Ե. Էլիբեկյան

Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Հ.Խուրշուդյան,Ա.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Ե. Էլիբեկյան)***

Ընդունել ի գիտություն, որ 02.10.23թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 14:00-ին: 2023 թվականի հոկտեմբերի 10-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Էրմեդ» ՍՊԸ | adamyanerem@yahoo.com | 04721572 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Ե. Էլիբեկյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Ե. Էլիբեկյան)***

Մասնակից՝ «Էրմեդ» ՍՊԸ-ի հայտը կազմված է հրավերի պահանջներին ոչ համապատասխան, արձանագրված անհամապատասխանությունը ենթակա է շտկման: Գնահատող հանձնաժողովը Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հանձնաժողովի քարտուղարը 16.10.2023թ. armeps համակարգով ծանուցեց մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին, մասնավորապես.

«Երմեդ» ՍՊԸ

**Հարգելի մասնակից:**

**«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2023/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ շտկել ներկայացվող որակի սերտիֆիկատները, նշելով հստակ Ձեր կողմից առաջարկվող ապրանքների որակի սերտիֆիկատները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Շտկված հստակեցված տարբերակը սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 17.10.2023թ. ժամը 18:00-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):**

Ծանուցված մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված տարբերակը, որը ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան:

**Որոշվեց՝ շտկում ներկայացրած «Երմեդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

### *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

*(Ե. Էլիբեկյան)*

10.10.2023թ.՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին մասնակցի կողմից ներկայացված գինը ներկայացվում են կից ֆայլով (excel):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

---

*(Ե. Էլիբեկյան)*

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

### *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

*(Ե. Էլիբեկյան)*

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտը.

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2023/51» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր «Երմեդ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով՝ 480,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2023/51» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած

➢ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

**Որոշվեց**. «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2023/51» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասը՝ հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------- Ե. Էլիբեկյան

Անդամներ՝ ___________________ Վ. Վահանյան

------------------- Ա. Գևորգյան

------------------- Հ. Խուրշուդյան

___________________ Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ------------------- Հ. Սարգսյան

Արագածոտնի մարզի «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների (պաթանատոմիական) ձեռք բերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերի արդյունքները 10.10.2023թ. Հայտերի վերջնաժամկետի օրվա դրությամբ

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Երմեդ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Պաթանատոմիական սեկցիոն սեղան | 33931300/502 | 1 | 7,000,000.00 | 7,000,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2 | Սառնարան (սառցե սրահ՝ դիակների պահպանման համար) 2 մարմնի համար | 33941400/502 | 1 | 7,000,000.00 | 7,000,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3 | Պաթանատոմիական գործիքների հավաքածու | 33911110/502 | 1 | 600,000.00 | 600,000.00 | 480,000.00 | 0.00 | 480,000.00 | 480,000.00 | 480,000.00 |